ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2019թ. թիվ 177-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 9, 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական և ծնողական խորհուրդների նախագահների 22.03.2019թ. և Նոր Խաչակապ համայնքի ղեկավարի 29.03.2019թ. թիվ 80 գրությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածի «ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ մասում՝

1. «Սարգսյան Բագրատ» բառերը փոխարինել «Չալաբյան Անահիտ» բառերով, «Միրզախանյան Վարդանուշ» բառերը՝ «Աբգարյան Անժելա» բառերով, «Աբգարյան Կարեն» բառերը՝ «Բարսեղյան Գայանե» բառերով, «Տոռոզյան Սուրեն» բառերը՝ «Արաբաչյան Շահեն» բառերով և «Եպիսկոպոսյան Հայկանուշ» բառերը՝ «Ղազարյան Աննա» բառերով:

2. Վերահաստատել մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Շուշանիկ Լալայանի թեկնածությունը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. ապրիլի 5
ք.Վանաձոր